«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային վայրերի դերը սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Իրանուհի Հարությունյան

Մանկապարտեզ՝«Թթուջուր գյուղի մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 5

1.2 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ 6

ԳԼՈՒԽ 2

ԱՅՑ ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ.....8

2.1 ԱՄՓՈՓԻՉ ԴԱՍ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է նախադպրոցական տարիքը: Այդ իսկ պատճառով կարևոր է այն տարբերակը, թե այս շրջանում ինչ է պետք սովորեցնել, ինչ մեթոդներով ու ձևերով դա անել: Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա հետաքրքրասեր ու անհագ է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ և սպունգի պես կլանում է գիտելիքները: Այս տարիքում ամեն ինչ հետաքրքիր է երեխային և նա ակտիվորեն ընկալում է աշխարհը, հետևաբար երեխայի տարիքային այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ օգտագործվի ուսումնական հաստատությունում իրականացվելիք կրթադաստիարակչական գործունեության ընթացքում: Հենց այս ժամանակահատվածում կարևոր է երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի, բնության նկատմամբ, հետաքրքրություն առաջացնել նրա մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումները անձի հասարակության մասին:

Իմ կողմից ***«Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում»*** թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ խիստ կարևորում ենք մշակութային այցերի, էքսկուրսիաների և առհասարակ մշակույթի դերը երեխայի ընդհանուր զարգացման, աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայնման, տրամաբանական մտածողությանգործում: Աճող սերնդին մեր մշակութին ծանոթացնելը կարևորագույն խնդիր է: Երեխայի մոտ պետք է դեռևս մանկապարտեզից ձևավորել ճաշակ, սովորեցնել գնահատել գեղեցիկը, նկատել շրջակա աշխարհի գույները: Մանկապարտեզում կարող ենք հաճախ խոսել այդ ամենի մասին, երեխաներին ցուցադրել արվեստի հայտնի ստեղծագործություններ, բնության գեղեցիկ պատկերներ, սակայն խոսելն այլ բան է, սեփական աչքով տեսնելն այլ բան: Այս առումով սաների զարգացման գործում շատ կարևոր է էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը: Իմ նպատակն է, որ երեխան մշակութային վայրում իր տեսածը կարողանա արդեն մանկապարտեզում՝ նկարչության, խոսքի զարգացման պարապմունքի ժամանակ վերարտադրի, ավելի

հեշտ ու հաճույքով աշխատի, նկարի: Այս խնդիրներն են, որոնք ծառացել են մեր առջև սույն աշխատանքը կատարելիս:

Լ. Ասատրյանի, Գ. Հակոբյանի «Մանկավարժություն» համատեղ ձեռնարկում, որը ներկայացնում է մանկավարժության տեսական-մեթոդաբանական հիմքերը, մանկավարժական գործընթացի կազմակերպման օրինաչափությունները, կանոնները, սկզբունքները, մեթոդները,համառոտ խոսվում է նաև էքսկուրսիաների մասին՝ որպես ուսուցման կազմակերպման ուշագրավ ձև[1]: ***Լ. Սմբատյանի, Լ.Վերդյանի, Հ. Մինասյանի***Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագրում նույնպես խոսվում է էքսկուրսիաների դերի մասին[2]: Աշխատանքը կատարելիս օգտվել ենք ինչպես այդ գրքերից, այնպես էլ՝ համացանցային աղբյուրներից:

Սույն աշխատանքը կատարելիս մանրամասն ուսումնասիրել եմ Երևանի թանգարանների և մշակութային օջախների պաշտոնական կայքերը, որպեսզի հասկանամ, թե որ հաստատությունում ինչ հետաքրքրություն կա համապատասխան տարիքային խմբի և որ ամենակարևորն է՝ մանկապարտեզի սաների տարիքին համապատասխան ինչ կրթական ծրագրեր կան: Ի վերջո նախապատվությունը տվեցինք Հենրիկ Իգիթյանի անվան մանկական պատկերասրահ այցին:

Առաջին գլխում ընդհանուր ներկայացրել եմ էքսկուրսիոն մեթոդը՝ ուղղված նախադպրոցական սաների ընդհանուր զարգացմանը, էքսկուրսիայի կառուցվածքը և կազմակերպման ձևերը: Երկրորդ գլխում խոսել եմ Հենրիկ Իգիթյանի մանկական պատկերասրահ մեր այցի մասին: Իսկ վերջում էքսկուրսիան ավարտվում է ամփոփիչ զրույցով, որի ընթացքում դաստիարակը ընդհանրացնում է սաների տեսածն ու լսածը:

---

[1] ***Լ.Ասատրյան, Գ. Հակոբյան***, Մանկավարժություն, Երևան, 2017, էջ 219-221:

[2]Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Հ. Մինասյան, Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր.Ծրագիր, Երևան, 2011, էջ 14:

ԳԼՈՒԽ 1.ԷՔՍԿՈՒՐՍԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Էքսկուրսիաների նպատակը, նշանակությունը և գործառույթները:

էքսկուրսիաները մեծ դեր ու նշանակություն ունեն նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում:

Էքսկուրսիաները կատարում են հետևյալ գործառույթները՝

1.**Կրթական**- երեխայի մոտ ձևավորվում են իմացական գիտելիքներ:

2. ***Զարգացնող***- ուշադրության, հիշողության ընդունակության զարգացում:

3.***Դաստիարակչական***- գեղագիտական դաստիարակություն, հայրենասիրության դաստիարակում: Էքսկուրսիաների ընթացքում յուրացվում են տարբեր միջավայրերում վարվելակերպի նորմեր: էքսկուրսիաները հարստացնում են երեխաների միտքը նոր տպավորություններով, ընդլայնում են նրանց մտահորիզոնը, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք մանկապարտեզ բերել հնարավոր չէ, մնում են միայն տպավորությունները: Էքսկուրսիայի միջոցով երեխաների մեջ ամրապնդվում է կարգապահությունը, կազմակերպվածությունը, զարգանում են ուշադրությունն ու դիտողունակությունը, արթնանում սեր դեպի մշակույթը: Էքսկուրսիաների էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ: Այն զննական մեթոդ է: Էքսկուրսիաները և մշակութային այցերը գործունեության այն ձևերն են, որոնք երեխաներին իսկապես դուր են գալիս:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար :Հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն ասել է, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: Ոչ մի ձևով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի

միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի[3]:

Էքսկուրսիայի անցկացման մեթոդիկայում առանձնացվում են հետևյալ փուլերը՝ էքսկուրսիայի նախապատրաստում, սաների գնալը ուսումնասիրվող օբյեկտ, նյութի յուրացումն ու ամրակայումը, էքսկուրսիայի նյութերի մշակումը և արդյունքների ամփոփումը[4]:

Թեմայի արդիականություն. Մեզ բախտ է վիճակվել աշխատել 21-րդ դարի ուսումնական հաստատությունում, ինչը մեզանից պահանջում է անընդհատ նոր մոտեցումների, ճիշտ մեթոդների գործունեության ավելի հետաքրքրաշարժ ու ժամանակակից ձևերի կիրառում, արդի ուսուցումը կյանքի հետ կապելու դաստիարակման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու նոր պահանջներից ելնելով: Հենց այդպիսի գոործունեության ձևերից մեկն էլ էքսկուրսիաներն ու մշակութային այցերն են:

Համապատասխանությունը. Նոր չափորոշչի և ծրագրի պահանջներին:

Ըստ նոր ծրագրային պահանջների գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ պետք է լուծել սանի ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային գեղարվեստագիտական դաստիարակության խնթիրները և ըստ այդ գործունեության ձևերի այդ խնթիրներից շատերն իրականացվում են արտամանկապարտեզային պայմաններում: Եվ հենց այստեղ է, որ շատ մեծ ու կարևոր է էքսկուրսիաների ու մշակութային այցերի ընձեռած հնարավորությունները, քանի որ գործունեության այս ձևով ապահովվում է նոր չափորոշչի ոլորտային վերջնարդյունքներից շատերը և ձևավորվում է սանի լեզվական, ճանաչողական սոցիալական, ժողովրդական և այլ կարողունակությունները:

1.2 Էքսկուրսիաների կառուցվածքը կազմակերպման ձևերը ու մեթոդները

Էքսկուրսիայի ընթացքում մանկապարտեզի դաստիարակը կիրառում է մանկավարժական հատուկ տեխնիկա և մեթոդներ: Էքսկուրսիան բնույթով աշխույժ է և հուզիչ, որի ընթացքում դաստիարակը պետք է խուսափի պաշտոնական ուսուցումից: Էքսկուրսիայի ընթացքում դաստիարակի՝ սաների հետ շփվելու ոճը

[3] https://multiurok.ru/files/ek-skowrsian-orpes-owsowts-man-kazmakerpman-dzew.html

[4] ***Լ.Կասատրյան, Գ. Հակոբյան***, Մանկավարժություն, Երևան, 2017, էջ 220:

պետք է լինի ավելի անկեխծ ու նուրբ: Սաները պետք է գիտելիք ձեռք բերեն առանց նույնիսկ դա գիտակցելու: Էքսկուրսիայի բովանդակությունը պետք է համապատասխանի երեխաների տարիքին և հետաքրքրություններին, չպետք է ունենա պարապմունքի ավանդական ձև: Դաստիարակը ուշադրություն է դարձնում նաև երեխաների հագուստին, որոնք պետք է համապատասխանեն տարվա եղանակին և վայրին: Եթե էքսկուրսիան ենթադրում է տրանսպորտով ճանապարհորդություն, ապա դաստիարակը և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարությունը պետք է նախապես պատրաստեն համապատասխան փաստաթղթերը (պատվեր, անվտանգության ճեպազրույց, սաների ցուցակ) և ստանան թույլտվություն: Ապա նախապես պետք է պայմանավորվել համապատասխան վայրերի հետ ժամային առումով, որպեսզի ճիշտ կազմակերպվի ամեն ինչ: Որքան էլ դաստիարակին ծանոթ լինի էքսկուրսիայի վայրը, նա պետք է նախորոք մտածի բոլոր պահերի մասին և զննի տեղանքը: Նա նաև սահմանում է էքսկուրսիայի առանձին մասերի անցկացման հաջորդականությունը: Կարևոր է նաև ճիշտ ընտրված ուղին, որը չպետք է լինի հոգնեցուցիչ և սաներին շեղի ճիշտ և ծրագրված նպատակից:

ԳԼՈՒԽ 2. ԱՅՑ ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Դեպի մշակութային վայրեր ուղղված էքսկուրսիաները նպաստում են նախադպրոցական երեխաների գեղագիտական հայացքների, ինչպես նաև ճաշակի ձևավորմանը, դարձնում ունակ՝ իրերն ու երևույթները գնահատել էմոցիոնալ կերպ: Կարևորելով երեխաների շփումն արվեստի հետ և հասկանալով մշակութային վայրեր այցելության նշանակությունը նրանց համար, մենք որոշեցինք երեխաներին տանել Հենրիկ Իգիթյանի անվան մանկական պատկերասրահ և Հ. Պարոնյանի անվան տիկնիկային թատրոն, որտեղ ցուցադրվելու էր <<Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները>> մանկական ներկայացումը:

Քանի որ հեռու տեղից եինք գնացել՝ մոտ երեք ժամ, մենք երեխաների հետ կատարեցինք նախապատրաստական աշխատանքներ: Նրանց հետ զրույց ունեցանք արվեստի, նրա տեսակների, ճյուղերի մասին: Ծանոթացրեցինք նաև ներքին կարգապահական կանոններին՝ բարձր չխոսել, ձեռքով չդիպչել ոչ մի նկարի և իրերի: Սաները շրջեցին թանգարանի երեք հարկերով: Այստեղ նրանք հայտնվեցին տարբեր գույների աշխարհում, դիտեցին տարբեր աշխատանքներ, ծանոթացան մի շարք երկրներում տեղ զբաղեցրած երեխաների գունեղ նատյուրմորտներին: Տեսան նաև այն հատվածը, որտեղ կար առանձին մանկական հեքիաթների հերոսների գունագեղ նկարներ, տեսան տարբեր հնադարյան զենքերի, կենդանիների բրոնզե պատկերներ և տառեր: Այցը թանգարան նպաստավոր էր նրանով, որ երեխաները ծանոթացան նկարչության ժանրերին: Էքսկուրսավարը

նրանց մատչելի, իրենց տարիքին համապատասխան ձևով ներկայացրեց թե ինչ է նատյուրմորտը, որն է բնանկարը և այլն: Էքսկուրսիան ինտերակտիվ էր, երեխաները նույնպես ներգրավվեցին, եղան հարց ու պատասխաններ, որոնց երեխաները ակտիվ պատասխանում էին: Ավարտին երեխաները բաժանվեցին երեք խմբի՝ գիդի հրահանգով: Մի խումբը պետք է ցույց տար սրահում ներկայացված բնանկարները, մյուս խումբը

նատյուրմորտները, երրորդ խումբը՝ հեքիաթներին վերաբերող պատկերները: Խմբերը գրեթե բոլորն էլ անթերի կատարեցին աշխատանքը, անգամ վերջում ցույց տվեցին իրենց դուր եկած նկարը և մեկնաբանեցին, թե ինչու են հենց այդ նկարը ընտրել: Էքսկուրսիայի միջոցով երեխաների մոտ զարգացավ գունազգացողությունը: Այսուհետև նրանք ավելի հեշտ կտարբերակեն գույների երանգները, տոները, կհասկանան, կզգան թե գույների որ համադրությունն է ավելի գեղեցիկ: Ինձ համար մեծ բավականություն էր տեսնել երեխաների ժպիտներն ու քննարկումները: Այնուհետև ուղևորվեցինք դեպի Հ. Պարոնյանի անվան տիկնիկային թատրոն, որտեղ երեխաներին սպասում էր հեքիաթային մի աշխարհ: Այստեղ նրանց ամեն ինչ հետաքրքիր էր, ավելի հետաքրքրեց մեծ բեմը և գունագեղ լույսերը երբ սկսվեց ներկայացումը: Մոտ մեկ ժամ տևողությամբ ներկայացման ժամանակ ոչ մի շարժ, ավելորդ իրարանցում չնկատվեց սաներիս կողմից: Նրանք ուշի ուշով հետևում էին ընթացքին: Այնուհետև սկսվեցին մեծ քննարկումներ, նաև որոշակի դերային խաղեր ներկայացումից: Դրանից հետո բարձր տրամադրությամբ գնացինք մանկական սրճարան: Այստեղ նրանց ոգևորվածությունը կրկնապատկվեց: Հագեցած օրվա ավարտին, ճանապարհին սկսեցինք վերլուծել մեր այդքան հետաքրքիր անցած ուղին: Հետաքրքիր էր լսել նաև երեխաների քննարկումները նրանց դրական կարծիքները գրեթե անցած օրվա հետ, որովհետև բավականին ուշ ժամի հասանք տեղ: Մեզ հետ էին նաև մանկապարտեզի տնօրենը, մեթոդիստը և դաստիարակներ: Սաների այս այցը դեպի մշակութային վայրեր կարևոր էր

այնքանով, որ այն երեխաների մոտ առաջացրեց ուրախ, լուսավոր և տոնական տրամադրություն: Այս էքսկուրսիայի դիտարկումներից հասկանալի էր որ այցը նպատակային էր: Տեսնելով նրանց ակտիվությունը, հետաքրքրվածությունը, տպավորվածությունը, անգամ ճանապարհային հեռավորության չհոգնածությունը եկա այն եզրահանգման, որ էքսկուրսիաները իսկապես կարևոր նախադպրոցական կրթության մեջ: Եվ կարծում եմ ,որ սաներս այսուհետ ավելի մեծ հաճույքով կմասնակցեն մանկապարտեզի պարապմունքներին : Իսկ մինչ այդ ստորև կներկայացնեմ գեղեցիկ նկարներ այս հիշարժան օրվա հետ կապված:

2.1 Ամփոփիչ դաս

Թեմա՝ էքսկուրսիա, զբոսանք, տարիք 4-5 տարեկան:

Ծրագրային բաղադրիչ (Իշա, նկարչություն):

Կարողունակություն՝ ճանաչողական, մոտիվացիոն:

Վերջնարդյունք.

1. Երեխան կարողանա ճիշտ վերարտադրի անցած օրվա տպավորությունները
2. Կարողանա ըստ իր ճաշակի, իր դուր եկած նկարը նկարի վրձինով

Նպատակ՝

1. Արտահայտի իր տպավորությունները և զգացողությունները բառերով
2. Կարողանա աշխատի վրձնով կոկիկ, մաքուր, պահպանելով գունային համադրությունը

Անհրաժեշտ նյութեր՝ պրոեկտոր, թուղթ, ջրաներկ կամ գուաշներ, վրձիններ, լաթեր և ջրաններ:

Խթանման փուլ՝ հարց – Ի՞նչ եք տեսնում էկրանին սիրելի փոքրիկներ: (էկրանին նախապես միացված էր Հ. Իգիթյանի անվան պատկերասրահից նկարներ): Երեխաները մեծ ոգևորությամբ, առանց հերթափոխի սկսեցին տալ տարբեր պատասխաններ ոև շարունակական էր այս ամենը: Այդ պահին հետաքրքիր էր տեսնել նրանց ակնհայտ գոհունակ ու ժպտերես հայացքները և ոգևորված պատասխանները:

Իմաստի ընկալման փուլ՝ այս փուլում բաժանվեցին անհրաժեշտ պարագաները և հանձնարարվեց նկարել իրենց դուր եկած նկարները պատկերասրահից: Ընթացքում աշխատանքը շրջում էի և վերահսկում, նկատում էի որ շատերը

աշխատում էին վերհիշելով անցած օրվա նկարներից: Նկատեցի որ երեխաների մոտ ավելի զարգացած էր նաև տեսողական հիշողությունը, ինչի վրա հիմնվելով աշխատել էին շատերը: Այնուհետև դրեցինք աշխատանքները չորանային, սակայն շարունակվում էր երեխաների մոտ քննարկումները թե պատկերասրահի, թե թատրոնի, թե սրճարանում եղած տպավորությունների մասին:

Կշռադատման փուլ՝ այս փուլում հարց տվեցի փոքրիկ սաներիս: (Ի՞նչն էր ձեզ հետաքրքիր երեխաներ: Ի՞նչ նոր բան իմացանք էքսկուրսիայից հետո և ի՞նչն էր որ այսօր հաճույքով վերարտադրեցիք:) Հնչեցին շատ պատասխաններ, սակայն ամենից հետաքրքիրը Նարեի պատասխանն էր. <<Ընկեր Իրան ջան ինչ դժվարություն, ավելի շատ հետաքրքիր էր, ընտիր էր ամեն բան: Բայց սաղից լավը փոքրիկ Անահիտի պատկերած գիշերն էր >>: Եվ նա իր նկարում փորձել էր վերարտադրել նույն պատկերը, նույն վառ գույներով: Վերջում աշխուժացնելու համար լսեցինք Areg's Time <<Գույներ >> երգը:

Դասին ներկա էին նաև տնօրեն՝ Լ. Դումանյանը, մեթոդիստ՝ Մ. Ծատուրյանը և դաստիարակ՝ Լ. Գևորգյանը: Նախ սկզբից արտահայտվեց տնօրեն Լ. Դումանյանը: Նա շնորհակալություն հայտնեց, որ ամեն բան կազմակերպվել էր ըստ պատշաճի: Հայտնեց որ հիացած էր երեխաների և պահվածքից և պատասխաններից առավել ևս երեխաների արագ աշխատելու և կողմնորոշվելու կարողությունից: Նշեց, որ էքսկուրսիան նպատակային էր և երեխաների մոտ ամեն բան լավ էր ստացվել, դաստիարակը հասել էր իր նպատակին:

Մեթոդիստ Մ. Ծատուրյանը ևս խոսեց հաջող էքսկուրսիայի ընթացքի մասին: Նա նշեց որ դաստիարակ Ի. Հարությունյանի կազմակերպված էքսկուրսիային բոլորս էլ ունեցել ենք մեր ներդրումը՝ փոխօգնությունը, սակայն հիմնական ծանրությունը դրված էր նրա ուսերին և նա պատվով հաղթահարեց այդ ամենը: Ինչպես գեղեցիկ և հագեցած անցկացրեց էքսկուրսիան, այնքան էլ գեղեցիկ և մատչելի, նոր մեթոդներով հագեցած անցկացրեց դասը: Նա կարողացավ հասնել իր վերջնարդյունքին՝ միայն առաջարկեց լավագույն նկարներով պատի ստենդ պատրաստել: Իսկ դաստիարակ Ի. Հարությունյանը խոստացավ որ վաղը անպայման կկատարի: Հաջորդիվ արտահայտվեց դաստիարակ Լ. Գևորգյանը: Նա շնորհակալություն հայտնեց հագեցած դաս պլանավորելու համար: Իսկ երբ

հարցրեց. <<Երեխաներ հետաքրքիր էր էքսկուրսիան, կհիշեք այն միշտ>>: Պատասխաններից հասկացավ որ երեխաների մոտ ամեն ինչ տպավորված էր և բարձր տրամադրությունը ապահովված էր:

Դաստիարակ Ի. Հարությունյանը շնորհակալություն հայտնեց նախ երեխաներին ապա տնօրեն Լ. Դումանյանին, որ ընդունեց առաջարկը և աջակցեց ինչով կարող էր: Շնորհակալություն հայտնեց նաև դրական կարծիքներ հայտնելու համար և արտահայտվեց. <<Ես կրկին անգամ համոզվեցի որ էքսկուրսիաները ավելի են մտերմացնում երեխաներին, պատկերավոր են դարձնում երեխայի միտքը և հիշողությունը, տալիս են և գիտելիքներ, և հիշարժան տպավորություններ>> :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիով, ***«Էքսկուրսիաների և մշակութային վայրերի դերը սաների զարգացման գործում»*** թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացությունների.

.Էքսկուրսիայից հետո բացահայտեցի, որ երեխաների հետ մանկապարտեզից դուրս աշխատելը, նպատակային այցերը մշակութային կենտրոններ, շատ կարևոր են: Մանկապարտեզից դուրս շփումը ավելի մտերմացրեց երեխաներին:

. հասա նրան, որ երեխաների մոտ առաջացավ գեղեցիկը ընկալելու կարողություն, ձևավորվեց գեղագիտական ճաշակ: Հասա իմ հիմնական նպատակին. նկարները երեխաների մեջ արթնացրեցին հույզեր, նրանք կարողացան տեսնել, հասկանալ, նկարագրել, բառերով արտահայտել տեսածը, զգացածը:

.կցանկանայի, որ էքսկուրսիաները շարունակական բնույթ կրեն և դաստիարակները իրենց հիմնական աշխատանքի բաղկացուցիչ մաս դարձնեն այն:

. համոզվեցի, որ սաների հետ ցանկացած էքսկուրսիա՝ լինի դա թանգարան, թատրոն, այգի, և այլն երեխաների համար դառնում է հիշարժան օր և սովորական առօրյայի համեմատությամբ բերում է բազմազանություն, տալով և գիտելիքներ, և տպավորություն :

Օգագործված գրականություն ցանկ

1. **Լ.**Ասատրյան, Գ. Հակոբյան, Մանկավարժություն, Երևան, 2017, 358 էջ:
2. Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Հ. Մինասյան, Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր .Ծրագիր, Երևան, 157 էջ:
3. Հակոբ Պարոնյանի անվան տիկնիկային թատրոն https://comedytheater.am/
4. https://multiurok.ru/files/ek-skowrsian-orpes-owsowts-man-kazmakerpman-dzew.html
5. Հենրիկ Իգիթյանի անվան մանկական պատկերասրահ https://henrik-igityan.mus.am/am/
6. Լարիսա Մորոզովա <<Ինչպես ճիշտ և հետաքրքիր անցկացնել էքսկուրսիան մանկապարտեզում>> https://mclkic.net/zanyatya-s-detmi/konspekt-ckskursii-v-sredney-grupp.html
7. Ушинский – "Собрание сочинений,,. (1948г. Стр.333).